

Խորհրդի 1995 թվականի հունիսի 19-ի 95/18/ԵՀ ՀՐԱՀԱՆԳ

Երկաթուղային կազմակերպությունների լիցենզավորման մասին

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը եւ, մասնավորապես, դրա 75-րդ հոդվածը,

հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը (1),

հաշվի առնելով Տնտեսական եւ սոցիալական հարցերով կոմիտեի եզրակացությունը (2),

գործելով Պայմանագրի 189գ հոդվածով սահմանված ընթացակարգի համաձայն (3),

քանի որ միասնական շուկան ներառում է առանց ներքին սահմանների տարածք, որտեղ ապահովվում է ապրանքների, անձանց, ծառայությունների եւ կապիտալի ազատ տեղաշարժը,

քանի որ ծառայություններ մատուցելու ազատության սկզբունքը պետք է կիրառվի երկաթուղային համակարգի նկատմամբ՝ հաշվի առնելով այդ ոլորտի հատուկ հատկանիշները,

քանի որ Խորհրդի՝ «Համայնքի երկաթուղիների զարգացման մասին» 1991 թվականի հուլիսի 29-ի 91/440/ԵՏՀ հրահանգով (4) սահմանվում է, որ երկաթուղային կազմակերպություններն ու երկաթուղային կազմակերպությունների միջազգային խմբավորումները պետք է ունենան միջազգային երկաթուղային տրանսպորտից օգտվելու որոշակի իրավունքներ,

քանի որ ապահովելու համար, որպեսզի երկաթուղային ենթակառուցվածքից օգտվելու իրավունքները կիրառվեն Համայնքով մեկ միասնական եւ ոչ խտրական հիմունքով, անհրաժեշտ է 91/440/ԵՏՀ հրահանգի 10-րդ հոդվածում նշված ծառայություններ մատուցող երկաթուղային կազմակերպությունների համար լիցենզավորում ներմուծել.

քանի որ անհրաժեշտ է պահպանել 91/440/ԵՏՀ հրահանգի գործողության շրջանակը՝ ներառյալ տարածաշրջանային, քաղաքային ու մերձքաղաքային ծառայությունների համար նույն հրահանգում նախատեսված բացառությունները, եւ քանի որ անհրաժեշտ է մասնավորեցնել, որ Լա Մանշի թունելով անցնող երկկողմանի երթեւեկության

տրանսպորտային ծառայությունները նույնպես ընդգրկված չեն այդ հրահանգի գործողության շրջանակում.

քանի որ որեւէ անդամ պետության կողմից տրամադրված լիցենզիան պետք է համապատասխանաբար վավեր համարվի Համայնքի ամբողջ տարածքում,

քանի որ երկաթուղային ենթակառուցվածքի հասանելիության կամ դրանցով տարանցիկ փոխադրման պայմանները կկարգավորվեն Համայնքի իրավունքի այլ դրույթներով.

քանի որ, հաշվի առնելով սուբսիդիարության սկզբունքը, ինչպես նաեւ պահանջվող միասնականությունը եւ թափանցիկությունն ապահովելու նպատակով, անհրաժեշտ է, որպեսզի Համայնքը սահմանի լիցենզավորման նման համակարգի ընդհանուր սկզբունքները՝ անդամ պետություններին թողնելով լիցենզիաներ տրամադրելու եւ դրանք կառավարելու պատասխանատվությունը.

քանի որ հուսալի եւ պահանջները բավարարող ծառայություններ մատուցելու համար անհրաժեշտ է ապահովել, որ երկաթուղային կազմակերպությունները ցանկացած ժամանակ բավարարեն բարի համբավի, ֆինանսական համապատասխանության եւ մասնագիտական կարողությանը վերաբերող որոշ պահանջներ,

քանի որ հաճախորդներին եւ համապատասխան երրորդ անձանց պաշտպանելու համար անհրաժեշտ է ապահովել, որ երկաթուղային կազմակերպությունները պատշաճ կերպով ապահովագրված լինեն կամ համապատասխան միջոցառումներ ձեռնարկած լինեն՝ պարտավորությունների մասով ռիսկերը ծածկելու համար,

քանի որ լիցենզիաների կասեցման, չեղյալ հայտարարման, ինչպես նաեւ ժամանակավոր լիցենզիաների տրամադրման հարցերը նույնպես պետք է լուծվեն այս համատեքստում,

քանի որ երկաթուղային կազմակերպություններից նաեւ կպահանջվի պահպանել երկաթուղային ծառայությունների մատուցման հետ կապված եւ ոչ խտրական եղանակով կիրառվող ազգային եւ Համայնքի կանոնները, որոնց նպատակը ապահովելն է, որ տվյալ կազմակերպությունն իրականացնի իր գործունեությունը լիակատար ապահով պայմաններում երթուղու կոնկրետ հատվածներում,

քանի որ միջազգային երկաթուղային տրանսպորտի արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ է, որպեսզի երկաթուղային կազմակերպությունները բավարարեն այդ համակարգում ուժի մեջ մտած համաձայնագրերի պահանջները,

քանի որ երկաթուղային կազմակերպություններին գործող լիցենզիաներ տրամադրելու, պահպանելու եւ փոփոխության ընթացակարգերը պետք է համապատասխանեն թափանցիկության եւ խտրականության բացակայության սկզբունքները պահպանելու համընդհանուր պահանջին,

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ.

ԲԱԺԻՆ I

Նպատակը եւ գործողության ոլորտը

Հոդված 1

1. Սույն Հրահանգը վերաբերում է երկաթուղային տրանսպորտի կազմակերպություններին անդամ պետության կողմից լիցենզիա տալու, լիցենզիան նորացնելու եւ այն փոփոխելու համար կիրառելի չափանիշներին, երբ այդ կազմակերպությունները գործունեություն են ծավալում կամ հետագայում պետք է ծավալեն Համայնքում՝ մատուցելով 91/440/ԵՏՀ հրահանգի 10-րդ հոդվածում նշված ծառայություններ նույն հոդվածում սահմանված պայմանների համաձայն:

2. Երկաթուղային կազմակերպությունները, որոնց գործունեությունը սահմանափակվում է քաղաքային, մերձքաղաքային եւ տարածաշրջանային ծառայություններով, չեն կարգավորվում սույն Հրահանգի գործողության շրջանակում:

Երկաթուղային կազմակերպությունները եւ միջազգային խմբավորումները, որոնց գործունեությունը սահմանափակվում է Լա Մանշի թունելով անցնող երկկողմանի երթեւեկության տրանսպորտային ծառայություններով, նույնպես չեն կարգավորվում սույն Հրահանգի գործողության շրջանակում:

3. Լիցենզիան գործում է Համայնքի ամբողջ տարածքում:

Հոդված 2

Սույն Հրահանգի նպատակներով՝

ա) «Երկաթուղային կազմակերպություն» նշանակում է ցանկացած մասնավոր կամ պետական կազմակերպություն, որի հիմնական գործունեությունն է ապրանքների եւ (կամ) ուղեւորների փոխադրման համար երկաթուղային տրանսպորտի ծառայությունների տրամադրումը՝ պայմանով, որ տվյալ կազմակերպությունը կցորդում ապահովի,

բ) «լիցենզիա» նշանակում է այնպիսի թույլտվություն, որը տրամադրվել է որեւէ անդամ պետության կողմից կազմակերպությանը եւ որով ճանաչվում է այդ կազմակերպության իրավասությունը: Այդ իրավասությունը կարող է սահմանափակվել ծառայությունների որոշակի տեսակների տրամադրմամբ,

գ) «լիցենզավորող մարմին» նշանակում է անդամ պետության կողմից լիցենզիա տրամադրելու իրավասություն ունեցող մարմին,

դ) «քաղաքային եւ մերձքաղաքային ծառայություններ» նշանակում է տրանսպորտի ծառայություններ, որոնք մատուցվում են քաղաքի կենտրոնի կամ կոնուրբացիայի, ինչպես նաեւ նման կենտրոնների կամ կոնուրբացիայի եւ մերձակա տարածքների միջեւ տրանսպորտի կարիքները բավարարելու համար,

– «շրջանային ծառայություններ» նշանակում է տրանսպորտի ծառայություններ, որոնք մատուցվում են շրջանի տրանսպորտի կարիքները բավարարելու համար:

Հոդված 3

Յուրաքանչյուր անդամ պետություն նշանակում է լիցենզիաների տրամադրման իրավասություն ունեցող եւ սույն հրահանգից բխող պարտավորությունների իրականացման համար պատասխանատու մարմին:

ԲԱԺԻՆ II

Լիցենզիաները

Հոդված 4

1. Երկաթուղային կազմակերպությունն իրավունք ունի դիմելու լիցենզիա ստանալու համար այն անդամ պետությունում, որտեղ այն հիմնադրված է:

2. Անդամ պետությունը լիցենզիա չի տրամադրում կամ երկարաձգում դրա վավերության ժամկետը, եթե սույն Հրահանգի պահանջները բավարարված չեն:

3. Երկաթուղային կազմակերպությունը, որը բավարարում է սույն Հրահանգով պարտադրված պահանջները, իրավունք ունի ստանալու լիցենզիա:

4. Ոչ մի երկաթուղային կազմակերպության չի թույլատրվում տրամադրել երկաթուղային տրանսպորտի ծառայություններ, եթե նա մատուցվող ծառայությունների համար համապատասխան լիցենզիա չի ստացել:

Այնուամենայնիվ, նման լիցենզիան ինքնին իրավատիրոջն իրավունք չի տալիս օգտվելու երկաթուղային ենթակառուցվածքից:

Հոդված 5

1. Երկաթուղային կազմակերպությունը, նախքան գործունեություն ծավալելը, պետք է կարողանա ապացուցել տվյալ անդամ պետության լիցենզավորող մարմնին, որ ինքը ցանկացած ժամանակ կկարողանա բավարարել այն պահանջները, որոնք վերաբերում են բարի համբավին, ֆինանսական համապատասխանությանը, մասնագիտական կարողությանը, ինչպես նաև 6-9-րդ հոդվածներում նշված քաղաքացիական պարտավորությանը:

2. 1-ին պարբերության նպատակներով, յուրաքանչյուր դիմող կազմակերպություն տրամադրում է համապատասխան տեղեկություններ:

Հոդված 6

Անդամ պետությունները սահմանում են այն պայմանները, որոնց համաձայն, բարի համբավի մասին պահանջը համարվում է բավարարված՝ երաշխավորելու համար, որ երկաթուղային կազմակերպությունը կամ այդ կազմակերպության կառավարման համար պատասխանատու անձինք՝

– լուրջ քրեական հանցագործությունների համար դատապարտված չլինի (չլինեն)՝ ներառյալ առետրային բնույթի հանցագործությունները.

– սնանկ հայտարարված չի եղել (չեն եղել).

– դատապարտված չի եղել (չեն եղել) տրանսպորտի ոլորտի նկատմամբ կիրառելի օրենսդրության դեմ լուրջ հանցագործությունների համար.

– դատապարտված չի եղել (չեն եղել) սոցիալական կամ աշխատանքային իրավունքի պարտավորությունների լուրջ կամ կրկնվող խախտումների համար՝ ներառյալ աշխատանքային անվտանգության եւ առողջության վերաբերյալ օրենսդրության մասով:

Հոդված 7

1. Ֆինանսական համապատասխանության մասին պահանջները համարվում են բավարարված, եթե երկաթուղային կազմակերպությունը կարող է ապացուցել, որ ինքը կարող է կատարել իրական եւ պոտենցիալ պարտավորությունները, որոնք, իրատեսական ենթադրությունների համաձայն, սահմանվում են տասներկու ամիս տեւողությամբ ժամկետում:

2. 1-ին պարբերության նպատակներով՝ յուրաքանչյուր դիմող կողմ առնվազն տրամադրում է սույն Հրահանգի հավելվածի I բաժնում նշված տվյալները:

Հոդված 8

1. Մասնագիտական կարողության վերաբերող պահանջները համարվում են բավարարված, եթե՝

ա) երկաթուղային կազմակերպությունն ունի կամ կունենա կառավարման կառուցվածք, որտեղ առկա է գիտելիք եւ (կամ) փորձ, որն անհրաժեշտ է՝ լիցենզիայում սահմանված գործողությունների նկատմամբ անվտանգ ու հուսալի շահագործման վերահսկողություն եւ ղեկավարում իրականացնելու համար.

բ) անվտանգության համար պատասխանատու աշխատակազմը, մասնավորապես վարորդները, լիակատար որակավորում ունեն տվյալ համակարգում եւ

գ) տվյալ երկաթուղային կազմակերպության աշխատակազմը, երկաթուղու շարժակազմը եւ կազմակերպությունը կարող են տրամադրվելիք ծառայությունների բարձր մակարդակ ապահովել :

2. 1-ին պարբերության նպատակներով՝ յուրաքանչյուր դիմող կողմ առնվազն տրամադրում է սույն Հրահանգի հավելվածի II բաժնում նշված տվյալները:

3. Կազմվում է որակավորման պահանջների հետ համապատասխանության մասին համապատասխան գրավոր հավաստագիր:

Հոդված 9

Երկաթուղային կազմակերպությունը պատշաճորեն ապահովագրվում է կամ համապատասխան միջոցներ է ձեռնարկում՝ ազգային կամ միջազգային իրավունքի համաձայն կատարելու իր պարտավորությունները դժբախտ պատահարների դեպքում, մասնավորապես, կապված ուղեւորների, ուղեբեռի, բեռնափոխադրումների, փոստի եւ երրորդ անձանց հետ:

ԲԱԺԻՆ III

Լիցենզիայի վավերությունը

Հոդված 10

1. Լիցենզիան վավեր է քանի դեռ երկաթուղային կազմակերպությունը կատարում է սույն Հրահանգով սահմանված պարտավորությունները: Այնուամենայնիվ, լիցենզավորող մարմինը կարող է դրույթ նախատեսել առնվազն յուրաքանչյուր հինգ տարին մեկ անգամ կանոնավոր վերանայման վերաբերյալ:

2. Լիցենզիան կասեցնելու կամ չեղյալ հայտարարելու մասին հատուկ դրույթները կարող են ներառվել հենց լիցենզիայի մեջ:

Հոդված 11

1. Եթե լուրջ կասկած կա, որ երկաթուղային կազմակերպությունը, որը լիցենզիա է ստացել, չի կատարում սույն Հրահանգի պահանջները, մասնավորապես 5-րդ հոդվածի մասով, ապա լիցենզավորող մարմինը կարող է ցանկացած ժամանակ ստուգել, թե արդյոք տվյալ կազմակերպությունն իրոք համապատասխանում է այդ պահանջներին, թե ոչ:

Եթե լիցենզավորող մարմինը համոզվում է, որ երկաթուղային կազմակերպությունը այլևս չի կարող բավարարել սույն Հրահանգի պահանջները, մասնավորապես այդ հրահանգի 5-րդ հոդվածի մասով, ապա այն կասեցնում կամ չեղյալ է հայտարարում լիցենզիան:

2. Եթե որեւէ անդամ պետության լիցենզավորող մարմին համոզվում է, որ սույն Հրահանգի պահանջները բավարարելու լուրջ կասկածների հիմքեր կան երկաթուղային կազմակերպության կողմից, որին լիցենզիա տրամադրվել է մեկ այլ անդամ պետության լիցենզավորող մարմնի կողմից, ապա տվյալ անդամ պետությունը դրա մասին անմիջապես տեղեկացնում է այդ մարմնին :

3. Չնայած 1-ին պարբերությանը, եթե լիցենզիան կասեցվել կամ չեղյալ է հայտարարվել ֆինանսական համապատասխանության պահանջը չբավարարելու հիմքով, ապա լիցենզավորող մարմինը կարող է տրամադրել ժամանակավոր լիցենզիա, որը կախված կլինի երկաթուղային կազմակերպության վերակազմավորումից՝ պայմանով, որ մինչ այդ անվտանգությունը չվտանգվի: Այնուամենայնիվ, ժամանակավոր լիցենզիան դադարում է վավեր լինելուց իր տրամադրման օրվանից վեց ամիս հետո:

4. Եթե երկաթուղային կազմակերպությունը դադարեցրել է իր գործունեությունը վեց ամսով կամ լիցենզիան ստանալուց վեց ամիս հետո չի գործում, ապա լիցենզավորող մարմինը կարող է որոշում ընդունել այն մասին, որ լիցենզիան պետք է ներկայացվի հաստատման կամ կարող է կասեցնել այն:

Կապված գործունեությունն սկսելու ժամկետի հետ՝ երկաթուղային կազմակերպությունը կարող է խնդրել առավել երկար ժամկետ՝ հաշվի առնելով մատուցվելիք ծառայությունների առանձնահատկությունները:

5. Եթե կազմակերպության իրավական կարգավիճակի վրա ազդող փոփոխություն է տեղի ունեցել, մասնավորապես, միաձուլման կամ ձեռքբերման դեպքում, ապա լիցենզավորող մարմինը կարող է որոշում ընդունել լիցենզիան վերահաստատման ներկայացնելու մասին: Երկաթուղային կազմակերպությունը կարող է շարունակել իր գործունեությունը, եթե լիցենզավորող մարմինը չի որոշել, որ անվտանգությունը վտանգված է. այդ դեպքում նման որոշում ընդունելու համար հիմքերը տրվում են :

6. Եթե երկաթուղային կազմակերպությունը մտադիր է էականորեն փոխել կամ ընդլայնել իր գործունեությունը, ապա լիցենզիան ներկայացվում է լիցենզավորող մարմին՝ վերանայման համար:

7. Լիցենզավորող մարմինն արգելում է երկաթուղային կազմակերպությանը պահել իր լիցենզիան, եթե նրա դեմ սնանկության կամ նմանատիպ վարդույթ է սկսել, եթե տվյալ մարմինը հանգված է, որ իրատեսական չէ, որ տվյալ կազմակերպությունը ողջամիտ ժամկետներում կարող է բավարար ֆինանսական վերակառուցման ենթարկել իր կազմակերպությունը:

8. Եթե լիցենզավորող մարմինը կասեցնում, չեղյալ է հայտարարում կամ փոփոխում է լիցենզիան, ապա տվյալ անդամ պետությունը դրա մասին անհապաղ տեղեկացնում է Հանձնաժողովին: Հանձնաժողովը դրա մասին տեղեկացնում է մյուս անդամ պետություններին:

Հոդված 12

Սույն Հրահանգի պահանջներից բացի՝ երկաթուղային կազմակերպությունը պետք է պահպանի ազգային իրավունքի այն դրույթները, որոնք համապատասխանում են Համայնքի իրավունքին եւ կիրառվում են ոչ խտրական եղանակով, մասնավորապես, հետեւյալի վերաբերյալ՝

- հատուկ տեխնիկական եւ շահագործման պահանջներ՝ երկաթուղային ծառայությունների համար,
- աշխատակազմի, շարժակազմի եւ կազմակերպության ներքին կազմակերպման պահանջներ՝ անվտանգության գծով,
- աշխատողների եւ սպառողների առողջության, անվտանգության, սոցիալական պայմանների եւ իրավունքների գծով դրույթներ:

Հոդված 13

Երկաթուղային տրանսպորտի կազմակերպությունը պահպանում է միջազգային երկաթուղային տրանսպորտի ոլորտում կիրառելի համաձայնագրերը, որոնք գործում են իր գործունեության անդամ պետությունում:

ԲԱԺԻՆ IV

Անցումային դրույթը

Հոդված 14

Երկաթուղային ծառայություններ մատուցող երկաթուղային կազմակերպություններին տրվում է անցումային ժամկետ տասներկու ամիս տեւողությամբ՝ սույն Հրահանգի դրույթներին համապատասխանելու համար, որը հաշվարկվում է 16 (2) հոդվածում նշված փոխատեղման վերջնական ժամկետից սկսած: Այդ անցումային շրջանը չի ներառում որեւէ դրույթ, որը կարող է ազդել երկաթուղային աշխատանքների անվտանգության վրա:

ԲԱԺԻՆ V

Եզրափակիչ դրույթները

Հոդված 15

1. Համապատասխան անդամ պետությունը հրապարակում է լիցենզիաներ տրամադրելու ընթացակարգերը եւ տեղեկացնում է դրա մասին Հանձնաժողովին:
2. Հաշվի առնելով հասանելի բոլոր տվյալները՝ լիցենզավորող մարմինը հնարավորինս շուտ որոշում է ընդունում դիմումի վերաբերյալ ոչ ուշ, քան համապատասխան բոլոր տեղեկությունների, մասնավորապես, սույն հավելվածում նշված տվյալների ստացման պահից երեք ամիս հետո: Երկաթուղային կազմակերպությանը տեղեկացնում են որոշման մասին: Մերժման դեպքում տրվում է դրա հիմնավորումը:
3. Անդամ պետություններն ընդունում են միջոցներ՝ ապահովելու համար, որ լիցենզավորող մարմնի որոշումները ենթարկվեն դատական վերանայման:

Հոդված 16

1. Սույն Հրահանգի կիրառումից երկու տարի հետո Հանձնաժողովը Խորհուրդ հաշվետվություն է ներկայացնում դրա կիրառման մասին, անհրաժեշտության դեպքում

կցելով առաջարկներ, որոնք վերաբերում են Համայնքի կողմից ձեռնարկվող հետագա գործողություններին, մասնավորապես՝ կապված սույն Հրահանգի գործողության շրջանակը ընդլայնելու հնարավորության հետ:

2. 1. Անդամ պետությունները ընդունում են սույն Հրահանգին համապատասխանելու համար անհրաժեշտ օրենքները, կանոնակարգերը եւ վարչական ակտերը ոչ ուշ, քան Հրահանգն ուժի մեջ մտնելուց հետո երկու տարվա ընթացքում: Նրանք դրա մասին անմիջապես տեղեկացնում են Հանձնաժողովին:

3. Երբ անդամ պետություններն ընդունում են նշված ակտերը, դրանք պետք է սույն Հրահանգին կատարվող հղում պարունակեն կամ պետք է ուղեկցվեն նման հղումով՝ իրենց պաշտոնական հրապարակման պահին: Նման հղում կատարելու եղանակները սահմանվում են անդամ պետությունների կողմից:

Հոդված 17

Սույն Հրահանգն ուժի մեջ է մտնում Եվրոպական համայնքների պաշտոնական տեղեկագրում հրապարակվելու օրվանից:

Հոդված 18

Սույն Հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին:

Կատարված է Լյուքսեմբուրգում 1995 թվականի հունիսի 19-ին:

Խորհրդի կողմից՝

Նախագահ Բ. ՓՈՆՍ

1) ՊՏ, թիվ C 24, 28.01.1994թ., էջ 2 եւ ՊՏ թիվ C 225, 13.08.1994թ., էջ 9:

2) 1994 թվականի սեպտեմբերի 14-ին ներկայացված եզրակացություն (ՊՏ թիվ C 393, 31.12.1994թ., էջ 56):

3) Եվրոպական պառլամենտի 1994 թվականի մայիսի 3-ի եզրակացություն (ՊՏ թիվ C 205, 25.07.1994թ., էջ 38), Խորհրդի 1994 թվականի նոյեմբերի 21-ի ընդհանուր դիրքորոշում (ՊՏ թիվ C 354, 13.12.1994թ., էջ 11), եւ Եվրոպական պառլամենտի 1995 թվականի մարտի 14-ի որոշում (ՊՏ թիվ C 89, 10.04.1995թ., էջ 30):

4) ՊՏ թիվ L 237, 24.08.1991թ., էջ 25:

ՀԱՎԵԼՎԱԾ

I. 7 (2) հոդվածում նշված տվյալները

1. Ֆինանսական համապատասխանությունը կստուգվի երկաթուղային կազմակերպության տարեկան հաշվետվությունների միջոցով, կամ, եթե դիմող կազմակերպությունը չի կարող տարեկան հաշվետվություններ ներկայացնել՝ հաշվապահական հաշվեկշռի միջոցով: Մանրամասն տվյալներ պետք է տրամադրվեն, մասնավորապես, հետևյալ հարցերի շուրջ՝

ա) առկա միջոցներ, ներառյալ բանկի հաշվեկշիռը, բանկային հաշվեկշիռը եւ վարկերը

բ) միջոցներ եւ ակտիվներ, որոնք առկա են արժեթղթերի ձեռով.

գ) շրջանառու միջոցներ.

դ) համապատասխան ծախսերը՝ ներառյալ գնումների համար կատարված վճարները փոխադրամիջոցների, հողի, շենքերի, սարքավորումների եւ շարժակազմի համար.

ե) երկաթուղային կազմակերպության ակտիվների մասով կատարված գանձումները:

2. Մասնավորապես, դիմողը ֆինանսապես անհամապատասխան է համարվում, եթե նա իր գործունեության ընթացքում հարկային կամ սոցիալական ապահովության չվճարված պարտքեր ունի:

3. Լիցենզավորող մարմինը կարող է, մասնավորապես, պահանջել աուդիտի հաշվետվություն եւ համապատասխան փաստաթղթեր բանկից, պետական խնայբանկից, հաշվապահից կամ աուդիտորից: Այդ փաստաթղթերը պետք է ներառեն այնպիսի տեղեկություններ, որոնք վերաբերում են 1-ին պարբերության մեջ նշված հարցերին:

II. 8 (2) հոդվածում նշված տվյալները.

1. Շարժակազմի առանձնահատկությունների եւ շահագործման մասին տվյալներ, մասնավորապես, անվտանգության ստանդարտների առնչությամբ:

2. Անվտանգության աշխատակազմի որակավորման մասին տվյալներ եւ աշխատակազմի վերապատրաստման մասին մանրամասներ: